ԾԷ.

Հետևեալ կոնդակին հեղինակն է Աբրահամ Բ. Կաթողիկոս Էջմիածնի «ի գեղջէ խոշաբայ յերկրէն Վանայ». կը կոչուի նաև մշեցի և բիւրտիստանցի, Մշոյ Ս. Կարապետին առաջնորդ եղած ըլլալուն համար[1]։

Աբրահամու կաթողիկոսութիւնը տևած է չորս տարի (1730–1734)։

Լ.

Յիսուսի Քրիստոսի ծառայ Տէր Աբրահամ յօգնաթախիծ կաթողիկոս ամենայն Հայոց և Պատրիարգ Վաղարշապատու Լուսակառոյց և Տիրանկար Սրբոյ և մեծի երջանկազարդ Աթոռոյս Էջմիածնի։

Ցոր մեզ հոգևորական միարար սէրն և զկուսածնաւանդ ողջոյնն և զաստուած սուրբ հոգւոյն զձեր և զսուրբ զահիս զպարգևսն և զլուսատուին մերոյ չնորհաբաշխ սուրբ Աջոյն զչնորհն, հանդերձ եաւանդնոտ կաթոգին ըղձիւ և խանդակաթ բաղձանօք ընծայեալ նուիրեմ ի վերայ երջանկապատիւ սիրելւոյդ իմոյ, և հարազատ նազելի զաւակիդ մօրս լուսոյ, օրհնեալ բազմաժողով քաղաքիդ Եւդոկիոյ Հեղինակ Մինաս Աստուածաբանութեանն Վարդապետիդ և Արհիապանծ եպիսկոպոսիդ ի տէր խնդալ մեծաւ արգահատութեամբ և բնաւին խաղաղութեամբ, ի լրումն երկնաւորին խնդութեան. նաև հարցազընեմ զիարդն և զորպէսն քոյոյ բարեպէս կելոյդ, զոր տէր անփորձ պահեսցէ և փրկեալ ազատեսցէ ներքնոց և յարտաքնոց ձախողակի կրից ի փառս եկեղեցւոյ իւրոյ. ամէն։

Եւ ընդ սիրառաքի ողջունանուիրի քարտեղիս ծանիցէ յօգնիմաստ գիտութիւն Վսեմազարդիդ, զի ծիր սիրոյ սիրելւոյդ իմոյ ժամանեալ եհաս առ իս՝ և ընթերցեալ ծանեա[յ] զհամայնսն զոր ինչ ի նմա բացերևոց էր մելանտորակիւ. վասն որոյ սիրելի նախ ասեմ Լուսահոգի Փիլիպպոս վարդապետի կողմանէ գլուխդ ողջ լինի. հոգւով սրբով մխիթարիս. աստուած իւր հոգին լուսաւորէ, և ԲԺ.ան Վարդապետացն սրբոց դասակից և պսակակից արասցէ. ամէն։ Նա ևս սիրելի իզմիրու առաջնորդական կէլուրի կողմանէ զոր գրեալ էիր, իբր թէ տարինն Իկ քէսայ կելուր կը լինի. զի այս վասն նախանձու գրեալ են իզմիրցիքն, գիտեմ նազելի և լուեալ եմ ի բնէ անտի Հայրապետ Սիմէօն և Մանուէլ լուսահոգի վարդապետաց յիզմիրու ի սուրբ գահս հասուցեալ կելուրն. և քոյդ եւս գիտեմ որ քան զնոցա առաւել է, մանաւանդ գեղեցիկ չուրջառն և զաւազանն հանդերձ և այլ պատուական իրօքն և ընծայիւքն զոր յղեալ էիր առ իս. սոքա եւս յաւելորդութեանն յաւելորդն է, և գիտէ տէր որ ճշմարիտ քոյն քան զնոցա աւելի, բայց իզմիրցիքն զայն նախանձու գրեալ են առ իս. վասն որոյ յետ քանից աւուրց նոցա գիր հասարակ գրելոց եմ ըստ գրեցելոյ քում, և կոչելով զնոսա ի սուրբ գահս դատաստան վասն միոյ ամեան Իկ քէսայի կողմանէ. և դու սիրազունդ իմ լեր այսու ամենայնիւ անհոգ և միամիտ. զի գբապեղքն անկանելոց են ի խորխորատ՝ ըստ սաղմոսին. ողջ լեր տերամբ յիսուսիւ, ի չնորհ տեառն հանդերձ պաշտական մանուէլիդ. և ընդ քեզ հովանաւորեալ ժողովրդական երամովդ. Ամէն։ Գրեցաւ ՌՃԶԳ թվին յուլիսի ԺԴ, առ դրան մեծի վեհարանիս սուրբ Էջմիածնի։

[1734] [Աբրահամ կթղկս, ամենայն Հայոց]

Դարձեալ զայս ևս ծանիր սիրելի. զի լուսահոգի փիլիպպոս վարդապետի զամենայն ինչսն եթէ զգեստն, թէ չորեղէնն և թէ նաղտն և թէ վէճն ի քեզ է յանձին. նաեւս

1. Զամչեան. Պատմ. Հայոց. Գ. էջ 805։